ՀՀԿԳՄՄՆ <<ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆակուլտետ ՝ Նախնական զինվորական պատրաստության ամբիոն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա- Հարձակման նպատակը, տեսակները

Զինղեկ ՝ Արևիկ Մինասյան

Ղեկավար՝ Երվանդ Տոնոյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

Բովանդակություն

Ներածություն…….2

1. Հարձակման նպատակը, տեսակները……..3
2. Մոտոհրաձգային դասակի տեղն ու դերը հարձակման ժամանակ……5
3. Մոտոհրաձգային դասակի մարտակարգը, մարտական խնդիրները և ուժեղացման միջոցները հարձակման ժամանակ……6
4. Մոտոհրաձգային դասակի հրամանատարի աշխատանքի կարգը և բովանդակությունը հարձակումը կազմակերպելիս……9
5. Մոտոհրաձգային դասակի հարձակումը հակառակորդի հետ անմիջական շփման դրությունից……13
6. Մոտոհրաձգային դասակի հարձակումը ընթացքից……...15
7. Հարձակման ժամանակ արգելափակոցները հաղթահարելու կարգը…….16
8. Մոտոհրաձգային դասակի հարձակումը հատուկ պայմաններում՝

   8.1 Հարձակումը ձմռանը……...17

   8.2 Հարձակումը լեռներում……..17

   8.3 Հարձակումը անտառում……19

   8.4 Հարձակումը քաղաքում (բնակավայրում)……..20

Եզրակացություն……..21

Օգտագործված գրականության ցանկ……..22

Ներածություն

Հետազոտական աշխատանքում ուսումնասիրվում է հաձակման նպատակը տեսակները: Այս թեման ամենակարևոր թեմաներից է, որը պետք է դպրոցում աշակերտը ուսումնասիրի մանրամասնորեն: Մենք ապրում ենք շատ անհանգիստ պայմաններում ,որտեղ ռազմական լարվածությունը շատ բարձր է դրա համար դպրոցից պետք է աշակերտը գիտակցի և գիտենա հարձակման նպատակը , տեսակները: Հարձակումը հանդիսանում է ժամանակակից համազորային մարտի տեսակներից մեկը: Եվ այն իրականացվում է հակառակորդին լիակատար ջախջախման և տեղանքի կարևոր շրջանների գրավման նպատակով:Հարձակման նպատակն է հանդիսանում հակառակորդին պարտության մատնել ունեցած բոլոր միջոցներով, վճռական գրոհով, ստորաբաժանումների առաջխաղացումով թափանցել նրա մարտակարգի խորքը, ոչնչացնել և գերի վերցնել հակառակորդի կենդանի ուժը, գրավել սպառազինությունը և մարտական տեխնիկան, տեղանքի նախատեսված շրջանները:Ստորաբաժանումների անձնակազմը օգտվելով հակառակորդի կրակային պարտության արդյունքներից պետք է հարձակման անցնի ամբողջ ուժով և լարվածությամբ, անընդմեջ գիշեր ու ցերեկ, ցանկացած եղանակի:

2020 թ. Սեպտեմբերի 27 –ին կրկին խախտելով հաստատված զինադադարը Ադրբեջանի հանրապետությունը հարձակում է գործում ԼՂՀ սահմանների վրա , 44-օրյա մարտեր է մղվում : Զինադադարը է կնքվում Նոյեմբերի 10-ին:Այդ օրվանից մեր սահմանները մնում են լարված,և մենք պարտավոր ենք աշակերտին աշակերտական սեղանից սովորեցնելու մարտի տեսակները, գիտենալու հարձակման ձևերը, նպատակը:

Այս աշխատանքում մանրամասնորեն կտանք հարձակման հասկացության էությունը, նրա տեսակները, հակառակորդի վրա հարձակման անցնելու եղանակները, դասակը տեղն ու դերը հարձակման ժամանակ, նրա մարտակարգը, մարտական խնդիրները, որոնք առաջադրվում են դասակին, ուժեղացման միջոցները, դասակի հրամանատարի աշխատանքի կարգը և բովանդակությունը հարձակումը կազմակերպելիս, արգելափակոցների հաղթահարման կարգն ու եղանակները, դասակի հարձակման առանձնահատկությունները հատուկ պայմաններում:

1. Հարձակման նպատակը, տեսակները

Հարձակումը դա պատերազմական գործողությունների հիմնական տեսակներից մեկն է, որն իրականացվում է հակառակորդի ն ջախջախելու(ոչնչացնելու) և տեղանքի կարևոր շրջանները(բնագծերը, օբյեկտները) գրավելու նպատակով: Հարձակման նպատակն է՝ հակառակորդին պարտության մատնել ունեցած իջոցներով, վճռական գրոհով, ստորաբաժանումների արագընթաց առաջխաղացումով ներթափանցել նրա մարտակարգի խորքը, ոչնչացնել և գերի վերցնել հակառակորդի կենդանի ուժը, առգրավի սպառազինությունը և տեխնիկան, տեղանքին նախատեսված շրջանները(բնագծերը): Ելնելով առաջադրանքների նպատակներից, մասշտաբներից, ներգրավված ուժերից, հարձակումը կարող է լինել՝ մարտավարական կամ օպերատիվ, ռազմավարական նշանակության: Հարձակման տեսակներն են հանդիսանում՝

- Հետապնդումը՝ սա կատարվում է նահանջող հակառակորդի վրա հարձակումով: Հետապնդման էությունը կայանում է նրանում, որ թույլ չտրվի նահանջող հակառակորդին շունչ քաշելու, հետապնդել նրան մինչև վերջնական պարտության մատնելը և գերեվարելը: Հետապնդումն իրականացվում է հակառակորդի նահանջի ուղիներն կտրելով, թիկունքին և թևերին հարվածներ հասցնելով և այս ամենի կիրառման համար կիրառվում են տանկեր, ինչպես նաև օդային դեսանտ: Հետապնդելիս զորքերը ծավալվում են երթակարգի և նախամարտակարգի:
- Գրոհը՝ հարձակման վճռական պահն է, զինված ուժերի, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների, մարտական տեխնիկայի սրընթաց հարակումն է հակառակորդի վրա կրակային միջոցների հետ փոխգործակցված: Այն համարվում է ցամաքային զորքերի մարտավարական գործողությունների կարևորագույն տարրը:

- Հանդիպական մարտ՝ սա հարձակվող հակառակորդի վրա հարձակումն է, որի նպատակն է կարճ ժամանակահատվածում ջախջախել հարձակվող հակառակորդին, խլել նախաձեռնությունը նրանից և բարենպաստ պայմաններ ստեղծել հետագա գործուղությունների համար

Օգտվելով հակառակորդի կրակային հզորությունից , դասակի անձնակազմը պետք է հարձակման անցնի ամբողջ ուժով ու լարվածությամբ, անընդմեջ, գիշեր ու ցերեկ ցանկացած եղանակի սերտ փոխգործակցելով տարբեր ստորաբաժանումների հետ ոչնչացնելու պաշտպանվող հակառակորդին:

2. Մոտոհրաձգային դասակի տեղն ու դերը հարձակման ժամանակ

Մոտոհրաձգային դասակը հարձակվում է՝

- վաշտի կազմում,
- գումարտակի պահեստում,
- գրոհային խմբում,
- մարտական հետախուզական դետքում,
- ինչպես նաև կարող է գործել ինքնուրույն:

Մոտոհրաձգային դասակը բացի վերը նշվածից կարող է գործել մարտական օդային դեսանտից առաջ առաջավոր խմբում: Դասակը հարձակվում է մինչև 300մ ճակատով, հրամանատարական դիտակետը գտնվում է մինչև 50մ հետ, ջոկերի միջտարածությունը մինչև 50մ է:

3. Մոտոհրաձգային դասակի մարտակարգը, մարտական խնդիրները և ուժեղացման միջոցները հարձակման ժամանակ:

Մոտոհրաձգային դասակին հարձակման ժամանակ ցույց է տրվում՝

- Գրոհի օբյեկտը
- Հարձակման շարունակության ուղղությունը
- Վաշտի հետագա խնդիրը

Մարտական խնդիրները մոտոհրաձգային դասակի երբեմն առաջադրվում են ռադիոկապով, իսկ գիշերը անտառում հարձակման ժամանակ կարող է տրվել նաև հարձակման ուղղության ազիմուտը: Մոտոհրաձգային դասակի համար գրոհի օբյեկտ կարող են հանդիսանալ տանկերը, հրանոթները, գնդացիրները, խրամատներում կամ ամրաշինական կառույցներում գտնվող հակառակորդը և այլ կրակային միջոցներ:

- Հետիոտն կարգով հարձակվող մոտոհրաձգային դասակի մարտակարգը կազմված է շղթայից՝ ՀՄՄ(ԶՓ)-ից և ուժեղացման միջոցներից: Դասակի մարտակարգի ճակատը հասնում է մինչև 300մ, ջոկերի միջև տարածությունը հասնում է մինչև 50մ, դասակի հրամանատարը շարժվում է մինչև 50մ հետ շղթայից, իսկ ուժեղացման միջոցն գտնվում է շղթայից 100-200մ հեռավորությամբ առաջ կամ հետ: Այն դասակի մարտակարգը, որը հարձակվու է ՀՄՄ(ԶՓ)-ով, ինչպես նաև տանկային դասակի մարտակարգը կազմված է մարտական մեքենաների մարտական գծից, որոնց միջև հեռավորությունը կազմում է մինչև 100մ և մարտակարգում գործող ուժեղացման միջոցներից, որոնք գտնվում են 100-200մ հեռավորությամբ առաջ և հետ: Ականանետային դասակի մարտակարգը, որը գործում է ՀՄՄ-ի վրա, մեքենաները պետք է լինեն մի գծի վրա իրարից 50մ հեռավորության վրա: Գնդացրային, հակատանկային դասակների մարտակարգը, որը գործում է լրիվ կազմով պետք է գտնվի մեկ գծի վրա, մեքենաների հեռավորությունը միմյանցից՝ 150մ:

Որպես ուժեղացման միջոց հարձակման ժամանակ դասակը կախված իրադրությունից ուժեղացվում է՝

- Մեկ տանկով
- Հակատանկային ջոկով
- Սակրային ջոկով
- Գնդացրային ջոկով



Հետիոտն կարգով մոտոհրաձգային դասակի մարտակարգը հարձակման ժամանակ



ՀՄՄ-ներով հարձակվող մոտոհրաձգային դասակի մարտակարգը



Տանկային դասակի մարտակարգը հարձակման ժամանակ

4. Մոտոհրաձգային դասակի հրամանատարի աշխատանքի կարգը և բովանդակությունը հարձակումը կազմակերպելիս

Մարտը, որպես օրենք դասակի հրամանատարը կազմակերպում է տեղանքում, իսկ եթե հնարավոր չէ հարձակման ժամանակ ելման կետում կամ տեղանքի մակետի վրա: Այս դեպքում ջոկերի և տրված ուժերի խնդիրները դասակի հրամանատարը ճշտում է տեղանքում շարժման և հարձակման անցնելու ընթացքում: Թշնամու հետ անմիջական շփան պայմաններում մարտի ամբողջ աշխատանքը կազմակերպվում է տեղում : Ստանալով մարտական խնդիր դասակի հրամանատարը՝

- Գնահատում է իրավիճակը
- Ընդունում է որոշում
- Կազմակերպում է հետախուզությունը
- Կազմակերպում է փոխգործողությունը, մարտական մատակարարումը և ղեկավարումը
- Ստուգում է անձնակազմի պատրաստվածությունը, մարտական տեխնիկան և զինամթերքի առկայությունը
- Որոշված ժամին զեկուցում է վաշտի հրամանատարին

<u>Մարտական խնդիրը պարզելիս՝</u> դասակի հրամանատարը պետք է հասկանա դասակի և վաշտի խնդիրը, դասակի հարձակման ուղղությամբ ավագ հրամանատարի միջոցներով ոչնչացվելիք նշանակետերը կամ օբյեկտները, հարևանների խնդիրները և նրանց հետ փոխգործակցելու կարգը, ինչպես նաև հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը:

<u>Իրավիճակի գնահատումը՝</u>

1. Գնահատելով կազմը, հակառակորդի հնարավոր գործողությունների բնույթը կրակի միջոցների տեղակայման տեղերը, դասակի հրամանատարը ուսումնասիրում է՝
    - Հակառակորդի պաշտպանության առջևի գծի առջև արգելափակոցների առկայությունը
    - Դասակի հարձակման ճակատում ուժերի և միջոցների քանակությունը

- Հակառակորդի ուժերի միջոցների տեղակայումը մոտակա թիկունքում:

Հակառակորդին ուսումնասիրելով դասակի հրամանատարը որոշում է հակառակորդի պաշտպանության ուժեղ և թույլ կողմերը, ջոկերի հաձակման օբյեկտները, ուժեղացման միջոցները և հետագա հարձակման ուղղությունները:

2. Իրավիճակը ուսումնասիրելով դասակի հնարավորությունները և ապահովվածությունը դասակի հրամանատարը գնահատում է՝
   - Դասակի համալրումը և տրված ուժերի համալրվածությունը
   - Անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը
   - Մարտական մեքենաների տեխնիկական վիճակը, զենքի, պաշտպանական միջոցների և զինամթերքի առկայությունը
   - Մարտակարգում ջոկերի և տրված միջոցներիր տեղերը
   - Ուժերի և միջոցների տեղաբաշխումը
3. Իրավիճակը գնահատելով կազմը հարևանների գործողությունների բնույթը և փոխգործողությունը նրանց հետ դասակի հրամանատարը որոշում է հարևանների հետ փոխգործողության անհրաժեշտությունը և դա իրականացնելու համար մանրամասնորեն պայմանավորվում է նրանց հետ կապի մտնելու և թևերի ապահովման կարգը:

<u>Գնահատելով տեղանքը</u>՝ դասակի հրամանատարը ուսումնասիրում է՝

- Տեղանքի ընդհանուր բնութագիրը
- Հակառակորդի պաշտպանության առաջնային գծին մոտենալու գաղտնի տեղաքները
- Տեղազննման պայմանները և հարձակման ժամանակ կրակի կազմակերպումը
- Արհեստական և բնական արգելքների առկայությունը

Տեղանքի գնահատման ժամանակ դասակի հրամանատարը որոշում է՝ ջոկերի հարձակման տեղը հետիոտն կարգով, բնագիծը, որի գրավումով խախտվում է թշնամու կրակային համակարգը և ստորաբաժանումների ղեկավարումը, գործողությունների հավանական կարգը մոտական թիկունքում հակառակորդի:

Կազմակերպելով հետախուզությունը՝ դասակի հրամանատարը անցկացնում է ջոկերի տրված ուժերի հրամանատարների, ինչպես նաև մեխանիկ վարորդների հետ: Եթե տեղանք դուրս գալը հնարավոր չէ դասակի հրամանատարը կատարում է հետախուզություն ելակետային տեղանքում՝ քարտեզի վրա և տեղանքի մակետի վրա: Հետախուզության ընթացքում դասակի հրամանատարը ուսումնասիրում է տեղանքը, ցույց է տալիս կողմնորոշիչները և ճշտում է՝

- Հակառակորդի առաջավոր դիրքի դիմաց արգելափակոցները, կրակային համակարգի տեղերը, հատկապես հակատանկայինները
- Ջոկերի և տրված ուժերի մարտական և կրակային խնդիրները
- Արգելափակոցներում անցումների տեղերը և պայմանական նշանները
- Շարժման ուղղությունը հարձակման անցնելու տեղանքը և անվտանգության հեռավորությունը:

Հետախուզություն կատարելուց հետո դասակի հրամանատարը տալիս է մարտական հրամանը:

Մարտական հրամանում դասակի հրամանատարը նշում է՝

- Կողմորոշիչները
- Հակառակորդի կազմը, դասավորվածությունը և գործողությունների բնույթը, պաշտպանության առջևի եզրի ուրվագիծը և նրա կրակային միջոցների տեղաբաշխման վայրերը
- Վաշտի և դասակի առաջադրանքը/գրոհի օբյեկտը, հարձակման շարունակության ուղղությունը/
- Հարևանների առաջադրանքը, նաև հրետանու և կրակային միջոցների օգտագործման կարգը
- Ղեկավարման, տեղեկացման, փոխգործակցման ազդանշանները և դրանցով գործելու կարգը
- Հարձակմանը պատրաստ լինելու ժամանակը
- Իր տեղը և տեղակալին

Մարտական հրամանը դասակի հրամանատարը տալիս է տեղանքում, իսկ անհրաժեշտության դեպքում տեղանքի մակետի վրա և ճշգրտում տեղանքում մարտական առաջադրանքը դեպի գրոհի անցման սահմանագիծ շարժվելու ժամանակ կամ գրոհի սկզբում:

Կազմակերպելով փոխգործողությունը՝ դասակի հրամանատարը պարտավոր է՝

- Հարձակման համար ելման կետ շարժվելու մարտակարգը, զենքերից կրակ վարելու կարգը, արգելքների և արգելափակոցների անցման կարգը, նաև հակառակորդի կողմից իջուկային զենք օգտագործելու դեպքում անձնակազմի անվտանգության խնդիրները
- Նշել օդային նշանակետերի վրա կրակի վարման կարգը
- Հայտնել ազդարարման, ղեկավարման, փոխգործողության ազդանշանները և դրանցով գործելու կարգը
- Ցույց տալ անձնակազմին մեքենաներից իջնելու կարգը և իջնելուց հետո մարտական մեքենաների գործողությունները

5. Մոտոհրաձգային դասակի հարձակումը հակառակորդի հետ անմիջական շփման դրությունից

Հակառակորդի հետ անմիջական շփման դրությունից դասակը հարձակվում է նրա վրա ելման դիրքից՝ նախորոք մշակված և ստեղծված մարտակարգով:Այն դասակը զբաղեցնում է վերախմբավորման ընթացքում՝ մաշտպանվող ստորաբաժանումների միաժամանակյա հերթափոխմամբ:Մոտոհրաձգային դասակը վերախմբավորման ընթացքում տեղավորվում է վաշտի երկրորդ դիրքում, հրաձիգներըէ առաջին խրամատում, իսկ ՀՄՄ(ԶՓ)-ները իրենց կրակային դիրքերը գրավում են իրենց ջոկերի մոտ կամ նրանց հետևում մինչև 50մ հեռավորությամբ:Հարձակումից առաջ դասակն ընթացքից գաղտնի տեղավորվում է հակառակորդի պաշտպանությունից հեռու զորամիավորման ելման շրջանում:Իսկ հարձակման համար մարտակարգի ծավալվելը իրականացվումէ գրոհի անցման բնագիծ տեղաշարժվելու ժամանակ:Ելման շրջանում դասակը միշտ է պատրաստ լինի ետ մղելու հակառակորդի հանկարծակի հարձակումը:Մարտի կազմակերպման ամբողջ աշխատանքը կատարվում է տեղանքում եթե իրադրությունը թույլ է տալիս, իսկ եթե թույլ չի տալիս այն կազմակերպվում է տեղանքի մակետի վրա:

Դասակը հարձակումը սկսում է կրակային պատրաստության անցկացումից հետո, որի ժամանակ իր զենքերի կրակով ոչնչացնում է հակառակորդի կրակային միջոցները և կենդանի ուժը:

Սահմանված ժամանակում ավագ հրամանատարի հրամանով ելման դիրքեր զբաղեցրած տանկային դասակը սկսում է շարժվել դեպի գրահի անցման սահմանագիծ:Այստեղ տանկային դասակը ծավալվում է մարտագծի և շարժվում է առավելագույն թույլատրելի արագությամբ, ընթացքում կրակով ոչնչացնելով հակառակորդին:Մոտոհրաձգային դասակի հրամանատարը տեսնելով, որ տանկերը մոտենում են ելման դիրքերին, հետիոտն գործողությունների դեպքում անձնակազմին հրամայում է՝ «Պատրաստվել գրոհի» և հետո « Նշել տանկերի համար անցումներ»:Երբ տանկերը անցնում են ելման դիրքերը մոտոհրաձգային դասակի հրամանատարը տալիս է «Դասակ գրոհի- ԱՌԱՋ» հրամանը և դրանից հետո

անձնակազմը դուրս է թռչում խրամատից և արագացված քայլով կամ վազքով տանկերի հետևից գրոհում է հակառակորդին առաջ շարժվելով արգելափակոցներում բացված անցումներով:

Ստորաբաժանումների գրոհի անցնելուց հետո դասակի հրամանատարը ճշտում է հակառակորդի դիրքերը, իսկ եթե կա անհրաժեշտություն նաև ջոկերի մարտական խնդիրները:

Մոտենալով հակառակորդին 25-40մ հեռավորությամբ, խրամատներում գտնվող հակառակորդի վրա նռնակներ են նետում և « ՈՒՌԱ» գոչելով մտնում են պաշտպանության առաջնային գիծ ու հակառակորդին ոչնչացնում են դիմահար կրակով ու սվիններով, որից հետո տանկի հետևից անհապաղ շարունակում են գրոհը մատնանշված ուղղությամբ:

6. Մոտոհրաձգային դասակի հարձակումը ընթացքից

Ընթացքից հարձակման ժամանակ մոտոհրաձգային դասակը գրոհի կրակային նախապատրաստման ժամանակահատվածում վաշտի շարասյան կազմով շարժվում է դեպի գրոհի անցման անցման բնագիծ:Մոտոհրաձգային ստորաբաժանումների գրոհին օժանդակելու համար հակատանկային ու նռնականետային դասակները նախորոք կրակային դիրք կարող են առաջանալ գումարտակի հրամանատարի նշված կարգով:Եթե նշանակված է շարասյունների ծավալման կետ, այդ կետն անցնելուց հետո դասակները առավելագույն թույլատրելի արագությամբ ինքնուրույն կերպով դուրս են գալիս իրենց ուղղությունները:Գրոհի սահմանին մոտենալով դասակները վաշտի հրամանատարի հրամանով մարտակարգի են ծավալվում և ընթացքից կրակով ոչնչացնելով հակառակորդին շարունակում են առաջխաղացումը դեպի առջևի գիծ:Մոտոհրաձգային դասակը գործում է տանկերի հետևից:Հետիոտն կարգով գրոհի ժամանակ դասակի հրամանատարը մոտենալով մեքենաներից իջնելու տեղերին, տալիս է « Դասակ պատրաստվել հետիոտն գրոհի»հրամանը:Այս հրամանով ՀՄՄ-ները հասնում են տանկերին, իսկ անձնակազմը հանում է հրակնատներից զենքը և դնում է ապահովիչին՝ պատրաստվելով իջնել մեքենաներից:Երբ դասակը դուրս է գալիս մեքենաներից, հրամանատարի «Դասակ, մեքենաների մոտ»հրամանով ՀՄՄ-ները իջեցնում են արագությունը կամ կանգ են առնում օգտվելով թաքստոցներից:

7. Հարձակման ժամանակ արգելափակոցները հաղթահարելու կարգը

Հակառակորդի պաշտպանության առջևի գծի դիմաց գտնվող արգելափակոցները հաղթահարվում են հրետանու, մարտական ուղղաթիռների, նռնականետային ու հակատանկային դասակնորի, ՀՄՄ-ների, ԶՓ-ների, տանկերի և հրաձգային զենքի կրակի պաշտպանության ներքո:Այն տանկերն ու ՀՄՄ-ներն, որոնք ունեն ականազերծիչներ հակառակորդի կողմից տեղադրված ականադաշտերն իրենց ուղություններում հաղթահարում են մարտակարգով, իսկ այն տանկերն ու ՀՄՄ-ներն, որոնք չունեն ականաղերծիչներ ու ԶՓ-ները, ականադաշտերը հաղթահարում են բացված անցումներով, ըստ սահմանված կարգի:Ընդ որում հետիոտն կարգով գործողությունների ժամանակ գրոհող հակատանկային, մոտոհրաձգային, նռնականետային դասակների անձնակազմերը ականադաշտը հաղթահաում են տանկերի հետևից, տանկերի թրթուրների հետքերով կամ բացված անցումներով: Անձնակազմը մոտենալով արգելափակոցներին, դասակի հրամանատարի հրամանով՝ «Դասակ, այսինչ առարկայի ուղղությամբ երկշարասյուն (եռաշարասյուն), ուղղապահ՝ առաջին ջոկ, դեպի անցում վազքով-ՄԱՐՇ » ջոկերը նախորոք որոշված կարգով ընթացքից զբաղեցնում են իրենց տեղերը դասակի շարասյուններում:ՀՄՄ-ները, ԶՓ-ները այդ ընթացքում կարճատև կանգառներից կրակով ոչնչացնում են հակառակորդի այն կրակային միջոցներին, որոնք խոչընդոտում են տանկերին և անձնակազմին արգելափակոցները հաղթահարելուն:Նրանք արգելափակոցները հաղթահարում են դասակի շարասյան հետևից, իսկ եթե դասակը սպառազինված է կայուն սպառազինությամբ, ՀՄՄ-ով, ապա կարող են արգելափակոցները հաղթահարել շարասյուններով՝ անմիջապես տանկերի հետևից շարժվելով:

Դասակի շարժման կամ գրոհի ուղղության վրա դիստանցիոն միջոցներով ականապատված ականադաշտը դասակը հաղթահարում է անցումով, դասակի շարասյունով:ՀՄՄ-ները, ԶՓ-ները, տանկերը, որոնք չունեն ականազերծիչներ և գտնվում են մարտական գծում, հայտնվելով ականապատված տեղանքում, շարժվում են ելքի անցումներով, որոնք մինչ այդ ականազերծվել են ականազերծման տանովի լրակազմով և այլ միջոցներով:

8. Մոտոհրաձգային դասակի հարձակումը հատուկ պայմաններում

8.1 Հարձակումը ձմռանը

Ձմռանը ձյան խոր ծածկույթի պայմաններում մոտոհրաձգային դասակը սովորաբար հարձակվում է դահուկներով:Մեքենաներից իջնելը և դահուկներով ընթացքից գրոհելը կատարվում է հակառակորդից ավելի մեծ հեռավորության վրա:Գրոհի կազմակերպման ժամանակ դասակի հրամանատարը հատուկ ուշադրություն է դարձնում սպառազինությանը, ռազմական տեխնիկային և ցածր ջերմաստիճանի պայմաններում անձնակազմին ցրտահարումից պաշտպանելու միջոցներին: ՀՄՄ-ները, ԶՓ-ները գործելով տանկերի հետևից, իրենց կրակով ոչնչացնում են հակառակորդի այն նծանակետերը, որոնք իրենց կրակով խոչընդոտում են սեփական զթրքերի տանկերի առաջխաղացմանը:Դժվարամատչելի ուղղություններում տանկերը առաջ են շարժվում ճանապարհներով՝ աջակցելով դասակին:ՀՄՄ(ԶՓ)-ներով գրոհը հնարավոր է ձյունասառցային կամ սառցային մակերևույթի պայմաններում:

Տանկային դասակը(տանկերը) խոր ձյունածածկույթի ժամանակ հարձակվում են ստորաբաժանումների շղթայում կամ շղթայի հետևից, իսկ դժվարամատչելի տեղանքները հաղթահարելու համար օգտագործում է կախովի սարքավորումներ: Ձմռանը հարձակման ժամանակ ստորաբաժանումները ապահովվում են քողարկիչ խալաթներով, սպառազինությունը և մարտական տեխնիկան ներկվում է սպիտակ գույնով:Հակառակորդի պաշտպանության խորքում մարտի ժամանակ հաառակորդին թևանցելու և թիկունքից գրոհելու համար մոտոհրաձգային դասակը օգտվում է դահուկներից:

8.2 Հարձակումը լեռներում

Լեռներում ստորաբաժանումների գործողությունների վրա կարող են ներգործել՝ ճանապարհների սահմանափակ քանակը և ճանապարհներից դուրս շարժվելու հնարավորությունը, գաղտնի մատույցների և մեռյալ տարածությունների առատությունը, ինժեներական աշխատանքների կատարման և ականազերծիչների կիրառման դժվարությունը, ձնահոսքերի և լեռնային փլվածքների հավանականությունը, թունավոր գազերի տևական պահպանումը խորը հովիտներումն կիրճերում և այլն:Լեռներում մեքենաների տեղաշարժի ժամանակ ավելանում են վառելիքի ծախսը, իսկ մեծ բարձրությունների ժամանակ նվազում է շարժիչի հզորությունը:Հարձակումը լեռներում իրականացվում է բարձրունքների լանջերով, լեռնաշղթաների, ճանապարհների և հովիտների երկայնքով, նաև մատչելի ուղղություններով՝ կիրառելով շրջանցող ջոկատներ:Իսկ հակառակորդի զբաղեցրած լեռնային տեղանքի հատվածները օգտագործվում է հակառակորդի թևեր ու թիկունք գաղտնի դուրս գալու համար:

Մոտոհրաձգային դասակը լեռներում հարձակման ժամանակ կարող է գործել ինքնուրույն, վաշտից կտրված:Մոտոհրաձգային դասակը լեռներում հարձակվում է սովորաբար հետիոտն կարգով:Լեռներում հարձակումը կազմակերպելու ժամանակ դասակի կազմը հանգամանորեն ուսումնասիրում է տեղանքի բոլոր մակարդակներում հակառակորդի կրակային համակարգին, ուշադրություն դարձնելով թևահար կրակային միջոցներին, կատարում է դիտարկում և պատրաստում է անձնակազմը հակառակորդի դարանները ոչնչացնելու համար, հարձակման համար ընտրում է աննկատ մատույցներ և ջոկի զորաշարժի համար ուղղություններ, որոշում է թե ինչ կրակային միջոցներով և որտեղից է հարմար խոցել հակառակորդին: Հարձակման ժամանակ ուժեղացվում է դիտարկումը, հատուկ ուշադրություն է դարձում հակառակորդին, թևահար կրակ վարող կրակակետերը ճնշելուն, դարանները հայտնաբերելուն և դրանք ոչնչացնելուն, նաև գնդացիրների և դիպուկահար հրացանի օգտագործողներին ոչնչացնելը: Հակառակորդի բազմաշերտ դասավորվածությամբ բարձրունքները գրոհելիս հակառակորդի կրակային միջոցները և կենդանի ուժը միաժամանակ բոլոր հարկերում ճնշվում է: Առաջին շերտի վրա գրոհելիս դասակի կրակային միջոցների մի մասը կրակում է հաջորդ

շերտերում եղած հկառակորդի և այն կրակակետերի վրա, որոնք վարում են թևահար կրակ: ՀՄՄ(ԶՓ)-ները, տանկերը տեղաշարժվում են իրենց համար մատչելի տեղանքում և իրենց կրակով օժանդակում են մոտոհրագային դասակին:

8.3 Հարձակումը անտառում

Անտառում ստորաբաժանումների գործողությունների վրա ազդում են՝ փակ տեղանքը, ստորաբաժանումների շարժման համար մատչելի ճանապարհների սահմանափակ քանակը, անտառային հրդեհների բռնկվելու հավանականությունը, թունավոր նյութերի երկարատև անշարժ մնալը: Այս ամենի շնորհիվ դժվարանում է զորաշարժը, հատկապես տեխնիկայի խուսանավումը, ստորաբաժանումների ղեկավարումը և փոխգործողությունը, բարդանում է կողմնորոշումը, դիտարկումը և կրակի ճշտումը: Անտառը հակառակորդին հնարավորություն է տալիս պաշտպանության ժամանակ կիրառել տարբեր արգելափակոցներ, ավերածություններ, և օգտագործել հրդեհները, սակայն միևնույ ժամանակ անտառը նպաստում է գաղտնի մոտենալուն և հարձակման համար զորքերի ծավալմանը: Անտառում մոտոհրաձգային ստորաբաժանումնները սովորաբար հարձակվում են հետիոտն կարգով: Մոտոհրաձգային դասակը անտառում հարձակվում է ճանապարհի, կածանի երկայնքով, կամ նշված ազիմուտով: Մոտոհրաձգային դասակը սովորաբար գործում է հետիոտն կարգով, ջոկերի և զինվորների միջև տարածությունը կրճատվում է, իսկ դասակի հրամանատարը շարժվում է ուղղապահ ջոկի շղթայով: Տանկերը գործում են իրենց համար մատչելի տեղանքում՝ մոտոհրաձգային դասակի շղթայի հետևից և իրենց կրակով աջակցում են դասակի գրոհին: ՀՄՄ(ԶՓ)-ները այս դեպքում գրոհում են տանկերի հետևից և իրենց կրակով ոչնչացնում են հակառակորդի այն նշանակետերը, որոնք անձնակազմի և տանկերի առաջխաղացմանը խոչնդոտում են: Ծառերից կրակող հակառակորդը ոչնչացվում է դիպուկահարի և հատուկ նշանակված գնդացրորդների և հրաձիքների կողմից: Դասակը շարժվում է անտառում, խուսափելով բաց տարածքներից և անտառուղիներից: Հակառակորդի հետ հանկարծակի հանդիպման դեպքում դասակը

նռնակներ է նետում հակառակորդի վրա և վճռական գրոհով ոչնչացնում են ձեռնամարտում հակառակորդին: Անտառային փլվածքները և այլ արգելքները, դասակը շրջանցում է, իսկ եթե հնարավոր չէ շրջանցում կատարել բացվում են անցուղիներ: Անտառային փլվածքներին և արգելափակոցներին մոտենալիս անհրաժեշտ է որպեսզի դրանք նախապես գնդակոծվեն և հետախուզվեն:

8.4 Հարձակումը քաղաքում(բնակավայրում)

Քաղաքում հարձակվելու պայմանները բնութագրվում են դիտարկման և գնդակոծման գոտիների սահմանափակվածությամբ, ստորաբաժանումների զորաշարժի և կառավարման բարդությամբ: Հարձակումը կազմված է առանձին տեղային մարտերից և աչքի է ընկնում համառությամբ և հանկարծակիությամբ: Քաղաքում(բնակավայրում) դասակը հարձակվում է փողոցի երկարությամբ՝ 1 կամ 2 կողմերով: Իսկ փոխադարձ օժանդակությունն իրականցվում է փողոցի հակադիր կողմերում գտնվող շենքերի վրա կրակելու միջոցով: Մոտոհրաձգային դասակը և նրան տրված նռնականետերը, հրանոթները իրենց կրակով ու նռնակներով ոչնչացնում են հակառակորդին առաջին հերթին շենքերի նկուղներում և ստորին հարկերում: Որպես կանոն տանկերը գործում են մոտոհրաձգային դասակի շղթայում կամ շղթայի հետևից և իրենց կրակով ոչնչացնում են հակառակորդին նկուղում: Քաղաքում հարձակումը կազմակերպելիս դասակի հրամանատարը մանրամասն ուսումնասիրում է՝

- Գրոհի օբյեկտում հակառակորդի պաշտպանության բնույթը
- Կրակի համակարգը
- Հարևան շենքերից թևահար կրակի հնարավորությունները
- Օբյեկտի առավել հարմար մատույցները
- Արգելափակոցների առկայությունը

Մոտոհրաձգային դասակը մոտենալով գրոհի օբյեկտին դրա հետ զուգընթաց տանկերը, հրանոթները և այլ կրակային միջոցները իրենց կրակը տեղափոխում են վերին հարկերի, ձեռնահարկերի վրա: Դասակին տրված սարկրավորները պատերի և հակամիջյան ծածկերի մեջ բացում են անցումներ, իսկ անհրաժեշտության դեպքում

ականազերծում են գրված շենքը: Գրավելով շենքը, դրանից հետո այն մաքրում են հակառակորդից, իսկ դասակը դրանից հետո անցնում է հաջորդ օբյեկտի գրավմանը: Պաշտպանության համար նախատեսված շենքերն ու կառույցները գրավվելու համար մոտոհրաձգային դասակը, նաև կարող է գործել գրոհող խմբի կազմում: Գրոհային խմբի մեջ կարող են ընդգրկվել տանկերը, մոտոհրաձգային ստորաբաժանումները, հրանոթները, նռնականետերը, ինժեներասակրավորները՝ պայթուցիկ լիցքերով: Գրոհող խմբին տրվում է զինամթերքի ավելացված պաշար, հատկապես ձեռքի և հակատանկային նռնակներ, ինչպես նաև շենքը գրոհելու ժամանակ հարմարանքներ խոչնդոտները հաղթահարելու համար: Ուժեղ ամրացված շենքերը շրջափակվում են և շրջափակումից հետո պայթեցվում են:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքիս նպատակն է ծանոթացնել և խորացնել գիտելիքները այս թեմայի շուրջ:Այսպիսով ամփոփելով աշխատանքի արդյունքները կարող ենք եզրակացնել, որ այս թեման շատ կարևոր է որպիազի աշակերտը շատ խորացված իմանա,քանի որ մեր դասագրքում շատ հակիրճ է ներկայացված: Իմ կարծիքով այս թեմայի ուսումնասիրությունը պետք է լինի ավելի մանրամասնորեն: Հարձակումը հանդիսանում է պատերազմական գործողությունների տեսակներից մեկը, նպատակ ունենալով հակառակորդին ոչնչացնելու և տեղանքի կարևոր բնագծերը, օբյեկտները գրավելու:Հարձակման տարատեսակներն են համարվում՝ *գրոհը,* որը հարձակման վճռական պահն է, և այն իրականացվում է զորքերի սրընթաց հարձակումով, համարվելով ցամաքային զորքերի մարտավարական գործողությունների կարևորագույն տարրը:Մյուս տարատեսակը համարվում է *հանդիպական մարտը*, որը իրականացվում է հարձակվող հակառակորդի վրա, նրան ջախջախելու նպատակով: Եվ երրորդ տարատեսակը համարվում է *հետապնդումը*, որը իրականացվում է նահանջող հակառակորդի վրա, իր իսկ պաշտպանության խորքում, թույլ չտալով հակառակորդին նահանջել:Ստորաբաժանումների հարձակումը պաշտպանվող հակառակորդի վրա իրականացվում է՝ հակառակորդի հետ անմիջական շփման դրությունից և ընթացքից: Դասակը հարձակվելով հակառակորդի հետ անմիջական շփման դրությունից, դասակը հարձակվում է ելման դիրքից, իսկ ընթացքից հարձակման ժամանակ գրոհի անցման սահմանագծից:

Մոտոհրաձգային դասակը հարձակման ժամանակ կարող է գտնվել գումարտակի ռեզերվում, վաշտի կազմում, մարտական հետախուզական դետքում, գրոհային խմբում, ինչպես նաև մարտական օդային դեսանտում ու գործել ինքնուրույն կերպով:Հետիոտն կարգով հարձակվող մոտոհրաձգային դասակի մարտակարգը կազմված է շղթայից, ճակատով մինչև 300մ, հրամանատարը գտնվում է մինչև 50մ հետ, ջոկերի միջև տարածությունը մինչև 50մ է, ուժեղացման միջոցը գտնվում է շղթային 100-200մ առաջ կամ հետ:Իսկ մարտական մեքենաներով հարձակվող դասակի մարտակարգը կազմված է մարտական մեքենաների գծից, մեքենաների միջևտարածությունը մինչև 100մ է:Դասակին հարձակման ժամանակ մատնանշվում է գրոհի օբյեկտը, հարձակման շարունակության ուղղությունը և վաշտի մոտակա խնդիրը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, մաս 3-րդ (ՀՀ Պաշտպանության նախարարության հրատարակչություն Երևան 1997)
2. ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, մաս 2-րդ (ՀՀ Պաշտպանության նախարարության հրատարակչություն Երևան 1999)